

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից 2018թ. առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2018թ. տարեկան ծրագիրը պլանավորվել է ռիսկերի գնահատման հիման վրա և հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2018-2020թթ. ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը: 2018թ. ներքին աուդիտի տարեկան ծրագիրը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզպետի 29.12.2017թ. թիվ 323-Ա որոշմամբ, որով 2018թ. նախատեսվում է իրականացնել թվով 36 աուդիտ, որից 2-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 4-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 30-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում: 2018թ. առաջին կիսամյակում նախատեսվել և իրականացվել է աուդիտ 22 միավորներում, այդ թվում.

1. Հաշվապահական հաշվառման բաժին
2. Գնման ընթացակարգի արձանագրություններ և դրանում տեղ գտած տեղեկություններ
3. <<Ձորաղբյուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
4. <<Հրազդանի N 7 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
5. <<Գեղաշենի Ռ.Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
6. <<Նոր Հաճնի N 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
7. <<Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ
8. <<Արզնիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
9. <<Նոր Գեղիի N 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
10. <<Սոլակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
11. <<Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ
12. <<Աբովյանի ծննդատուն>> ՊՓԲԸ
13. <<Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
14. <<Չարենցավանի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
15. <<Քանաքեռավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
16. <<Կապուտանի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ
17. <<Աբովյանի N 7 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
18. <<Հրազդանի Պ.Սևակի անվան N 8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
19. <<Ալափարսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
20. <<Գառնիի N 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
21. <<Զորավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
22. <<Աբովյանի N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ:

Բոլոր կազմակերպություններում նախատեսվել է իրականացվել ֆինանսական աուդիտ՝ կազմակերպությունների ֆինանսական կառավարման գնահատման նպատակով՝ նախապես նախանշելով այն գործընթացները (թիրախները), որոնք ռիսկերի գնահատման արդյունքում համարվել են գնահատման ենթակա: Աուդիտը իրականացվել է ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին և դրանց կիրառման մեթոդական ցուցումներին համապատասխան: